Արշալոյսը, իրաւ, սկսել էր շառագունել. մենք առանց նկատելու անցուցել էինք ամբողջ գիշերը: Բայց Ասլանի մեզ հեռացնելու պատճառը ոչ այնքան լոյսի ծագելն էր, որքան այն, որ նա վախում էր, չլինի թէ մենք լսէինք պառաւ կախարդի բերնից մի անզգոյշ խօսք, որը կը մերկացնէր այն գաղտնիքը, թէ ինչո՞ւ պառաւը իր փոքրիկ Հիւբբիի հետ միշտ անբաժան էին Կարոյից եւ նրա ընկերներից, եւ կամ այն ի՞նչ «ամրոցային աղջիկ» էր, որ պառաւ կախարդի երեւակայութեան մշտական ցնորքն էր դարձել, որպէս աշխատում էր մեզ հաւատացնել ծածկամիտ Ասլանը...

Մենք ընդունեցինք Ասլանի ասածը եւ պատրաստուեցինք գնալու դէպի վանքը:

— Քանի որ այստեղ էք, — ասաց նա, — մենք կրկին ու կրկին անգամ պէտք է տեսնուենք, եւ հարկաւոր է, որ տեսնուենք. մենք խօսելու շատ բաներ ունենք...

Խ. ԱՍԼԱՆԻ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արեգակը արդէն ծագել էր, երբ մենք հասանք վանքի մօտ: Մարօն այնպէս անցաւ ուխտաւորների բանակի միջից, որ ոչ ոք նրան չճանաչեց:

Ես այնուհետեւ մի քանի անգամ տեսնուեցայ Ասլանի հետ. նա իր աբեղայական կերպարանքով յայտնւում էր ուխտաւորների ամէն շրջաններում: «Այստեղ, ասում էր նա, այս տօնախմբութեան առիթով հաւաքուել են ամէն երկրի հայեր, եւ ես նրանց լաւ ուսումնասիրելու համար փոխեցի կերպարանքս, գիտէի, որ աբեղան աւելի մատչելի է նրանց: Այս մարդիկն առանց զգացմունքի, առանց եռանդի չեն. նրանք հասկանում են իրանց դրութեան բոլոր այլանդակութիւնը, բայց դարեւոր հարստահարութիւնների տակ ճնշուելով, մինչ այն աստիճան հոգով եւ մարմնով թուլացած են, որ շատ բնական են գտնում իրանց վիճակի բոլոր դառնութիւնները: Նրանք կարծում են, թէ այլ կերպ լինել կարող չէր, թէ իրանք ստեղծուած են ստրուկներ լինելու համար: Մի ձեռք, մի զօրեղ ձեռք պէտք է, որ դրանց վեր բարձրացնէ ընկած դրութիւնից եւ կանգնեցնէ մարդկային ազատ իրաւունքների վրա»: Այնուհետեւ նա երկար խօսում էր ինձ հետ զանազան առարկաների վրայ, ես մինչեւ այսօր չեմ մոռացել, եւ կարող եմ բոլորը բառ առ բառ գրել: Նա ասում էր.

«Լինում է, այո՛, որ մի ամբողջ ժողովուրդ ինքն է կանգնում ոտքի վրայ, ինքն առանց օտարի ձեռնտուութեան թօթափում էր իր վզից ստրկութեան լուծը: Բայց դա լինում է այն ժամանակ, երբ նա բաւականին հասկացել է, թէ ինչ բան է ազատութիւնը: Եթէ մեր ժողովրդի առաջնորդող մասը նրան այն